Մեծահոգութիւն

Քաղուած Անդրէ Կոմթ-Սպունվիլի *“Մեծ Առաքինութիւնների մասին Կարճ Տրակտատ. Առօրեայ Կեանքում Իմաստասիրութեան Օգտագործումը”* (Լոնդոն, 2001. ֆրանսերէնից անգլերէն թարգամուած Քաթերին Թեմերսընի կողմից)

[Andrռ Comte-Sponville, (trans. Catherine Temerson), *A Short Treatise on the Great Virtues: The Uses of Philosophy in Everyday Life*, (London: William Heinemann, 2001)]

Մեծահոգութիւնը տալու առաքինութիւնն է: Սակայն, ի տարբերութիւն արդարութեան, որը պահանջում է տալ “իւրաքանչիւրին ըստ արժանւոյն”, մեծահոգութիւնը ներառում է տալ ուրիշին ոչ թէ իրը, այլ քոնը, որից նա զրկուած է: ... Անշուշտ, երկուսն էլ՝ արդարութիւնը եւ մեծահոգութիւնը կախուած են ուրիշների հետ մեր յարաբերութիւններից: ... Ըստ երեւոյթին, մեծահոգութիւնը աւելի կապ ունի սրտի կամ բնաւորութեան հետ, արդարութիւնը՝ մտքի եւ բանականութեան: Մեծահոգութիւնը չի նշանակում գործել ըստ այս կամ այն օրէնքի. նշանակում է անել աւելին, քան օրէնքի պահանջածը՝ գոնէ աւելին, քան մարդկանց օրէնքները, եւ գործել սիրոյ, բարոյականութեան եւ միասնութեան՝ միակ պահանջների համապատասխան:

Միասնական լինելը մի խմբի մաս կազմելն է, խումբ որը ամբողջական է: Լատիներէնում “solido” բառը՝ “ամբողջականն” է, որից Անգլերէն եւ նման եւրոպական լեզուներում՝ “solidarity”: Այստեղից էլ՝ ֆրանսիական օրէնսդրութիւնում, պարտապանները “solidaire” են երբ միասնաբար պարտքի տակ են գտնւում: ... Միասնականութիւնը նախ եւ առաջ համախմբուածութիւն է, փոխադարձ կապակցուածութիւն, ընդհանուր շահեր կամ ճակատագիր կրող մի համայնք: ...

Երկուսից մէկը պիտի լինի. կամ համայնքը իրօք համայնք է որը գոյութիւն ունի, այնպէս որ, երբ ուրիշներին եմ պաշտպանում, պարզապէս ինձ եմ պաշտպանում (այս պարագայում քննադատուելիք ոչինչ չկայ, բայց այսպիսի գործունէութիւնը աւելի շատ անձնական շահերից է բխում, բարոյականութեամբ դրդուած չէ), կամ էլ համայնքը ցնորքային է, վերացական կամ գաղափարախօսական, այնպէս որ իմ՝ ուրիշների համար պայքարելը այլեւս միասնականութեան խնդիր չէ (որով հետեւ իմ անձական շահերով պայմանաւորուած չէ) այլ՝ արդարութեան եւ մեծահոգութեան (արդարութիւն եթէ ուրիշներ ճնշւում են, ընկճւում կամ հարստահարւում. մեծահոգութիւն՝ եթէ այդպէս չէ, բայց իրենք պարզապէս թոյլ են կամ տխուր): Այլ կերպ ասած, միասնականութիւնը կամ չափազանց անձնասիրական է, կամ չափազանց երեւակայական, որպէս զի առաքինութիւն լինի: Կամ լաւ ձեւով հասկացուած անձնական շահերի խնդիր է, կամ էլ մեծահոգութիւնը՝ սխալ մեկնաբանուած:

Միասնականութիւնը կարող է իրօք մեծահոգութեան հասնել միայն եթէ գերազանցում է անձնական շահերը, խմբային շահերը. այլ կերպ՝ միայն եթէ գերազանցի միասնականութեանը: Եթէ ուրիշներին օգնելը մեր շահերից է բխում, ապա մեծահոգի լինելու կարիքը չէինք ունենայ, պարզապէս այնպէս կ'անէինք: Այն

փաստը, որ այնպէս չենք անում, կամ անում ենք նեղ շրջանակներում, ցոյց է տալիս որ մենք այնպիսի արարքներ իրականում չենք դիտում որպէս մեր շահերի բաղկացուցիչ եւ՝ այդպէս ձեւացնելով կեղծաւորութիւն ենք անում. ոչ թէ վատ ենք տեսնում կամ հականալուց դժուարանում ենք: Մեր սրտերը վատն են, որով հետեւ անձնասէր են նրանք. աւելի շատ մեծահոգութիւնից զերծ ենք, քան հասկացողութիւնից:

Քո եկամուտից քանի՞ տոկոսն ես տրամադրում նրանց, ովքեր աւելի աղքատ են քեզանից կամ պակաս հնարաւորութիւններ ունեն: Հարկերը հաշիւ չեն, որով հետեւ պարտադիր են, նաեւ մի' հաշուէք ընտանիքին կամ մտերիմներին տրամադրածը, քան զի աւելի սիրով, քան մեծահոգութեամբ է պայմանաւորուած այն ինչ որ իրենց համար անում ենք (որը մենք միեւնոյնժամանակ անում ենք մեզ համար՝ իրենց ուրախութիւնը լինելով մեր ուրախութիւնը): Իսկ կարո՞ղ ենք իմանալ, որ այն չնչին՝ յամէնայն դէպս արածներս բխում է մեծահոգութիւնից, թէ այն սոսկ մեզ բարոյականապէս հանգստացնելու համար է՝ այն փոքր գինը, որ վճարում ենք, որպէս զի մեր ողորմելի բարի խիղճը մխիթարուի:

Ինչպէս գրեց Ժանկելեւիչը. “Չնայած կարող ենք տալ առանց սիրոյ, գրեթէ անկարելի է սիրել առանց տալով”: Բայց ուրեմն սէ՞ր է, թէ մեծահոգութիւն: Այնուամէնայնիւ, այն գաղափարը, որ մենք մեծահոգի ենք մեր երեխաների նկատմամբ երբեք մտքովս չի անցել: Մենք պարտականութիւն ունենք իրենց հանդէպ մեծահոգի լինելու: Մենք չափազանց սիրում ենք մեր զաւակներին, չափազանց մտահոգւում ենք իրենց համար. այստեղ առաքինութիւն տեսնելով միայն մեզ կը խաբենք: Ինչ որ իրենց համար անում ենք, մեզ համար էլ ենք անում: Առաքինութեան կարիքը ինչո՞ւ կը զգայինք: Սէրը բաւարար է, այն էլ ի'նչ սէր: Ինչ վերաբերում է միւս տեսակ սիրոյ, անձից անջատ սէրը՝ սրբերին կամ օրհնեալներին սէրը, վստահ չեմ եթէ մեծահոգութիւնը կարող է դրա մասին մեզ շատ բան ասի կամ որ դա կարող է մեզ մեծահոգութեան մասին ինչ-որ տեղեկութիւն տայ:

Մեծահոգութիւնը, ինչպէս ասացի, տալու առաքինութիւնն է՝ դրամ տալու (որի դէպքում առատաձեռնութեան է հասնում) կամ անձնանուէր լինելու (երբ այն արդէն դառնում է վեհանձնութիւն կամ նոյնիսկ զոհողութիւն):

Ըստ Դէկարտի՝ մեծահոգութիւնը ե'ւ մէկի՝ իր ազատութեան գիտակցումն է (կամ անձի ազատ եւ պատասխանատու լինելու գիտակցումը), ե'ւ հաստատուն որոշումը՝ այն ազատութիւնը ճիշտ օգտագործելու: Ուստի՝ գիտակցութիւն եւ ինքնավստահութիւն. ազատ լինելու գիտակցութիւն եւ այդ ազատութեան օգտագործման ինքնավստահութիւն: Սա է պատճառը, որ մեծահոգութեամբ է խրախուսւում ինքնագնահատումը: Դէկարտը մեծահոգութեան մէջ տեսնում է ոչ միայն բոլոր առաքինութիւնների ակունքը, այլ նաեւ “իւրաքանչիւր անհատի գերագոյն լաւը”, որի բաղկացած է, ասում է. “լաւն անելու հաստատուն կամքով եւ այն զոհունակութեամբ, որը գալիս է սրանից”:

Իսկական ընկերները, Մօնթէնը նշում է. “չեն կարող միմեանց որեւէ բան տալ կամ ի պահ տրամադրել”՝ ... “ամէն ինչ, որպէս այդպիսին, լինելով ընդհանուր նրանց միջեւ”:

Իր ձեւով, մեծահոգութիւնը, ինչպէս եւ միւս առաքինութիւնները մեծամասնաբար, հնազանդում է Աստուածաշնչեան պատուիրանին: Սակայն կարո՞ղ ենք իրօք սիրել մեր ընկերոջը ինչպէս մեր անձը: Եթէ հնարաւոր լինէր, մեծահոգութեան նպատակը ի՞նչ կը լինէր: Իսկ ինչքանո՞վ արդիւնաւէտ է սէրը դարձնել պատուիրան, եթէ այն հետեւելու անկարող ենք: Միայն գործողութիւնները կարող են պատուիրուել. ուստի, պատուիրանի պահանջը ոչ թէ սիրելն է, այլ գործել այնպէս, որ կարծես թէ սիրում ենք՝ անելով մեր ընկերոջ այն ինչ մենք մեզ կ'անէինք, եւ անծանօթներին նոյնպէս: Պատուիրանը թելադրում է ոչ թէ զգացմունքներ կամ յուզմունքներ՝ որոնք փոխանցելի չեն, այլ արարքներ՝ որոնք այդպիսին են:

Ամբողջ աշխարհը մի բեմ է, եւ ապրելը նշանակում է դեր խաղալ: Բայց այս մարդկային կատակերգութիւնում դերերը եւ խաղացողները հաւասարապէս վարժ չեն: Շէքսպիրեան իմաստութիւն. բարոյականութիւնը գուցէ եւ իրօք ելոյթի խնդիրն է, բայց չկայ որեւէ լաւ ներկայացում, որը ինչ-որ ձեւով բարոյականութեան հետ առնչութիւն չունի: Խնդալուց կամ լացելուց աւելի լուրջ կամ իսկական բան կա՞յ: Մենք ձեւացնում ենք, բայց սա խաղ չէ: Մեր հետեւած օրէնքները մեր զուարճանքին համար չեն. նրանք են մեզ կերտում՝ դէպի լաւը կամ դէպի վատը: Իւրաքանչիւրս մի դեր է խաղում, բայց այդ դերը իւրայատկաբար իւրաքանչիւրիս է: Եւ, ճշմարտապէս, աւելին է, քան դեր. մեր կեանքն է, մեր պատմութիւնը: Սրա մէջ կամայական կամ արկածային ոչ մի բան չկայ: Մենք դառնում ենք, այն ինչ որ ենք՝ մեր կեանքի փորձութիւնների միջոցով:

Մեծահոգութիւնը մեզ կոչ է անում տալ՝ սիրոյ բացակայութեամբ, հենց այն մարդկանց, որոնց չենք սիրում եւ իրենց տալ աւելին՝ ինչքանով աւելի որ նրանք կարիքն ունեն կամ ինչքանով աւելի որ մեր ներոյժը թոյլ է տալիս իրենց օգնելու: Իսկապէս, երբ սէրը մեզ ուղեցոյց չի հանդիսանում, որով հետեւ չենք զգում այն, հրատապութեամբ ու մերձաւորութեամբ առաջնորդուենք: Ոմանք սրան գթասրտութիւն են ասում, բայց այդ սխալ է (քան զի իսկական գթասրտութիւնը սէրն է, ու կեղծ գթասրտութիւնը՝ ողորմածութիւնը կամ խղճահարութիւնը): Պիտի մեծահոգութիւն կոչուի, որով հետեւ դա մեզանից կախեալ է, միայն մեզանից, որով հետեւ այս իմաստով ազատ է, որով հետեւ՝ ի տարբերութիւն բնազդների, ունեցուածքի ու վախերի լուծի, այն հենց ազատութիւնն է՝ հոգով եւ գործով: Սէրը աւելի լաւ կը լինէր, անշուշտ, որից էլ եզրակացւում է, որ բարոյականութիւնը ամէն ինչ չէ, ոչ էլ կարեւորը: Սակայն մեծահոգութիւնը դեռ աւելի լաւ է եսասիրութիւնից եւ բարոյականութիւնը՝ անտարբերութիւնից:

Անձնական առաւելութիւնները աւելի հանգստաւէտ պայմանների կամ աւելի երկար կեանքի մասին չէ. այն վերաբերում է հնարաւորինս ազատօրէն ապրելուն՝ հնարաւորինս իսկութեանը համապատասխան: Յաւիտեանս ապրելը նպատակը չէ, որով հետեւ չենք կարող. **նպատակը լաւ ապրելն է: Եւ ինչպէ՞ս այն կարելի է առանց համարձակութեան ու մեծահոգութեան:**

Ըստ Հիւմի, եթէ մեծահոգութիւնը ամբողջաբար տիրող եւ տիեզերական լինէր, արդարութեան կարիքը չէինք ունենայ. եւ, ինչպէս տեսանք, այսպիսի պայմաններ վերացականօրէն հնարաւոր են ըմբռնել: Միւս կողմից էլ, պարզ է, որ արդարութիւնը, նոյնիսկ երբ հաստատուած լինի, չի կարող բացառել մեզ **մեծահոգութիւնից, որը՝**

չնայած քիչ անհրաժեշտ է հասարակութեանը, քան արդարութիւնը, աւելի թանկ է, ինձ թւում է, մեր մարդկայնութեանը:

Վերջացնեմ՝ նկատելով, որ մեծահոգութիւնը, ինչպէս բոլոր միւս առաքինութիւնները, բազմազան է ե'ւ բովանդակութեան առումով, ե'ւ այն անուններով, որոնցով կոչւում է կամ այն նկարագրելուն օգտագործւում է: Համարձակութեան հետ համատեղելով՝ հերոսութեան է հասնում: Միանալով արդարութեան՝ դառնում է անաչառութիւն: Կարեկցանքով՝ բարեսրտութիւն: Ողորմածութեան հետ մէկտեղ՝ լայնասրտութիւն: Սակայն նրա ամենագեղեցիկ անունն է իր գաղտնիքը՝ բաց գաղտնիք, որի մասին բոլորը գիտեն. մեղմութեան հետ միասին, այն կոչւում է **բարութիւն:**